

**ԴԱՆԻՆԸ ՎԱՐՈՒԺԱՆ — ԵՐԿԵՐԻ լիակատար ժողովածու (3 հատորով), հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 447 էջ:**

Հատորն ընդգրկում է Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր» և «Հացին երգ» ժողովածուները: «Հեթանոս երգեր» բանաստեղծությունների ժողովածուն բաղկացած է «Հեթանոս» երգեր» և «Գողգոթայի ծաղիկներ» շարքերից՝ թվագրված 1909—1912: «Հացին Լրդ» Դ. Վարուժանի հասուն շրջանի ստեղծագործության արգասիք է և վերաբերում է 1913—1914 թթ.: Այս բաժնի առաջին մասում զետեղված են մի շարք բանաստեղծություններ, որոնք տպագրվել են հեղինակի անհատական օրոք, իսկ երկրորդ մասում համահունչ հրատարակված բանաստեղծություններն են. երկու դեպքում էլ պահպանված է ժամանակագրական կարգը:

Հատորում տեղ են գտել որոշ անտիպ բանաստեղծություններ, ինչպես նաև Պատանիկ հատվածներ, Թարգմանություններ, Տարբերակներ, Բնագրային տարբերություններ և Մանթապարտություններ բաժինները: Գիրքը նախատեսված է բանասերների և ընթերցող լայն շրջանների համար:

Հատորի խմբագիրն է բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Ս. Շարությանը:

**ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆ — Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 300 էջ:**

Մենագրությունը հայ ժողովրդի դալերով օգտագործած տարբեր տոմարների քննական պատմությունն է սկզբից մինչև XVII դ.: Ներածության մեջ հեղինակը նախ անդրադառնում է լուսնային և արեգակնային օրացույցներին, որոնց համադրությամբ էլ առաջացել է երրորդ համակարգը՝ լուսնարեգակնային օրացույցը, ապա խոսում է հին Հայաստանի տոմարական համակարգերի մասին:

Գրքում առանձին բաժիններով ներկայացված են հին հայկական տոմարը, նրա սկիզբը և Հայկյան շրջանները՝ ամսանուններով, օրանուններով, ժամ և ժամանուններով, պահ և պահանուններով: Մանրակրկիտ քննարկվում է քրիստոնեական եկեղեցու դիվանագիտական մեկը՝ զատիկը՝ զատկացանկերով, որի վերաբերյալ Նիկիայի տիեզերական ժողովի որոշումն իրագործվեց համ իրականացվեց տոմարագիտական և իմաստասիրական աշխատությունների հեղինակ Անգրեաս Բյուղանդացու կողմից: Վերջինս կազմեց երկուհարյուրամյա զատկացանկ, որի ընթացքում չի պահպանվել և մեզ է հասել միայն հայերեն թարգմանությամբ: Ուսումնասիրության մեջ խոսվում է նաև հայոց Բուն թվականի, հայոց Մեծ թվականի և հայոց Փոքր (Սարկավազագիր) թվականի, Աթանաս Տարոնացու և Անանիա Շիրակացու մասին: Մենագրությունն ունի հավելված, որտեղ ներկայացված է հայոց Բուն թվականի ամսամուտերի և հուլյան Դարաշրջանի ամսաթվերի զուգորդական տախտակը: Գիրքը հասցեագրվում է հայ մշակույթի պատմաբաններին և ընթերցող լայն շրջաններին:

Մենագրության պատասխանատու խմբագիրն է Հ. Գ. Հակոբյանը:

**ՋՈՀՐԱՐ ՂԱՍԱՐՅԱՆ — Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 302 էջ:**

Աշխատության մեջ վեր է հանվում բուլղարահայ գաղութի պատմությունը, բացահայտվում են հայ-բուլղարական կապերը XIX դ. վերջից մինչև XX դ. 70-ական թվականները: Գրքի հինգ գլուխներում սովետահայ պատմաբանների աշխատությունների, արխիվային փաստական նորահայտ նյութերի հիման վրա լուսաբանվում են հայ և բուլղար ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, մշակութային կյանքի տարբեր բնագավառները, ընդգծվում է Ռուսաստանի և ռուս ժողովրդի պատմական դերը երկու ժողովուրդների ազատագրության գործում: Բացահայտված են Բուլղարիայում ֆաշիզմի առաջացման պատճառները, բուլղար կոմունիստների պայքարը ֆաշիզմի դեմ և հայ աշխատավորների գործունե մասնակցությունն այդ պայքարին:

Գիրքը ունի ամփոփում, աղբյուրներ, ցուցակ և ծանոթագրություններ, բուլղարահայ մամուլի ժամանակագրական ցուցակ, անձնանունների, տեղանունների և աշխարհագրական անունների:

ցանկեր, Հասցեագրվում է պատմաբաններին և ընթերցող լայն շրջաններին:  
Գրքի պատասխանատու խմբագիրն է Ռ. Հ. Խաչատրյանը:

**ՎԱԼԵՐԻ ՄԻՐՁՈՅԱՆ — Աշխատանքի մարքսյան փիլիսոփայությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 298 էջ:**

Մենագրության մեջ տեղ էն գտել մարդու աշխատանքային վարքին ու դաստիարակությանը, աշխատանքի նկատմամբ վերաբերմունքին, աշխատանքից բավարարվածությանը նվիրված սոցիոլոգիական հետազոտությունները՝ մարքսյան գաղափարների խորագնին վերլուծությամբ: Գրքի շրջա գլուխներում ցույց են տրվում աշխատանք-տեխնիկա կապի փիլիսոփայական-սոցիոլոգիական այն կարևորագույն լուծումները, որոնք մեթոդաբանական բացառիկ նշանակություն ունեն գիտատեխնիկական հեղափոխության մեր դարաշրջանում մարդկային աշխատանքի և աշխատանքում մարդու զարգացման բաղժանկողմանի պրոբլեմների լուսաբանման համար: Գիրքն ունի վերջաբան, ամփոփում, ծանոթագրություններ, Հասցեագրվում է փիլիսոփայներին, սոցիոլոգներին, աշխատանքի գիտական կադմակերպման մասնագետներին, ուսանողներին:

Գրքի պատասխանատու խմբագիրն է Ռ. Գ. Նավասարդյանը:

**ՎԱՀԱՐՇԱԿ ՔՈՍՅԱՆ — Արևմտահայերենի բառակապակցությունները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 251 էջ:**

Աշխատությունը նվիրված է արևմտահայ գրական լեզվի բառակապակցական կաղապարների քննությանը: Այն հայերենի բառակապակցությունների վերաբերյալ հեղինակի տպագրած մենագրությունների («Ժամանակակից հայերենի բառակապակցությունները», «Գրաբարի բառակապակցությունները», «Միջին հայերենի բառակապակցությունները») օրգանական շարունակությունն է:

Գրքի հինգ գլուխներում հեղինակը բացահայտել է գոյականի, ածականի, բայի, մակրայի և դերանվան լրացումների շարահյուսական-իմաստային հարաբերությունները՝ հենվելով արևմտահայ ճոխ ու հարուստ գրականության լեզվական, ինչպես նաև սփյուռքահայ լավագույն գրողների ոճի իրողությունների վրա: Գիրքն ունի համառոտագրությունների բաժին: Աշխատությունը հասցեագրված է հայոց լեզվի մասնագետներին:

Գրքի պատասխանատու խմբագիրն է Պ. Ս. Բեդիրյանը:

**ԱՐՄԵՆ ԶԱՐՅԱՆ — Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 223 էջ:**

Աշխատության մեջ պատմաճան և հնագիտական նոր տվյալների հիման վրա լուսաբանվում են անցյալի հայ քաղաքաշինության պատմությունը, հայ, հույն, հռոմեացի և արաբ պատմիչների վկայությունները, Հայաստանի քաղաքների մասին նրանց որոշ նկարագրությունները:

Մենագրության ութ գլուխներում հայ քաղաքաշինությունը առաջին անգամ հետազոտվում է համեմատական վերլուծությամբ՝ այլ երկրների քաղաքաշինական մշակույթների հետ: Շեշտվում են հայ քաղաքաշինական մտքի ուրույնությունը, ինքնատիպ ոճը, նկարագրվում է վերածնության շրջանում (IX—XI դդ.) ազատ և արքայական քաղաքների առաջացման ընթացքը: Աշխատության «Հավելված» բաժնում տրված է իդեալ քաղաքի գաղափարը, որը նորություն է հայ քաղաքաշինության պատմության մեջ:

Գիրքն ունի ծանոթագրություններ, ցանկեր, տախտակներ, Հասցեագրվում է ճարտարապետներին և ընթերցող լայն շրջաններին:

Մենագրության պատասխանատու խմբագիրներն են Ս. Մ. Կրկյաշարյանը և Մ. Մ. Հասարայանը: